

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

22.04.2011

2011 թ. ապրիլ ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2011 թ. ապրիլի 12-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Արթուր Զավադյանը, նախագահի տեղակալ Ներսես Երիցյանը, խորհրդի անդամներ Արմենակ Դարբինյանը, Անդրանիկ Նորեկյանը, Ահարոն Չիլինգարյանը, Աշոտ Մկրտչյանը, Վախթանգ Աբրահամյանը:

Խորհրդի նիստը սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ, որտեղ քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ընթացիկ զարգացումները: 2011 թ. մարտի 12-ամսյա գնաճը, որը հաշվարկվել է սպառողական զամբյուղի նոր կշիռների հիման վրա, կազմել է 11.5%, ինչը ԿԲ խորհուրդը բավականին բարձր է համարում: Շարունակում է բարձր մնալ պարենային ապրանքների գների աճը, որի նպաստումը մարտի 12-ամսյա գնաճին կազմել է 8.3 տոկոսային կետ:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2011 թ. մարտին նախորդ ամսվա նկատմամբ արձանագրվել է 0.8% գնաճ, որին գերազանցապես նպաստել է պարենային ապրանքների գների աճը՝ 0.4 տոկոսային կետով, որից միայն 0.2 տոկոսային կետը բաժին է ընկել «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբին, 0.1 տոկոսային կետը՝ «Հացամթերք» ապրանքախմբին: Ոչ պարենային ապրանքների և ծառայությունների նպաստումներն ամսական գնաճին կազմել են համապատասխանաբար 0.1 և 0.3 տոկոսային կետ: Ծառայությունների գնաճը պայմանավորել են բուժսպասարկման, տրանսպորտի և հանգստի կազմակերպման սակագների աճերը:

Տնտեսական ակտիվության ցուցանիշը, որը ներկայացնում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ տնտեսության ճյուղերի թողարկման ծավալների աճը, փետրվարին կազմել է 1.4%: Վերջինս ամբողջությամբ արդյունք է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում (բացառությամբ շինարարության) արձանագրված թողարկման ծավալների աճի: Արդյունաբերության ճյուղում արձանագրվել է 2.6% աճ՝ մետաղական հանքաքարերի արդյունահանման, սննդամթերքի, խմիչքների, մետալուրգիայի և մետաղյա արտադրատեսակների արտադրության ծավալների աճի հաշվին, որն էլ պայմանավորված է համաշխարհային տնտեսության վերականգնմամբ: Շինարարության ճյուղի թողարկման ծավալները նվազել են 4.1%-ով, ընդ որում, պետական բյուջեի, համայնքների միջոցների, միջազգային վարկերի և բնակչության միջոցների հաշվին շինարարության ծավալների կրճատումը որոշ չափով մեղմվել է կազմակերպությունների միջոցների և մարդասիրական օգնության հաշվին իրականացվող շինարարության ծավալների աճով: Ինչ վերաբերում է ծառայությունների աճին, այն հիմնականում արձանագրվել է մեծածախ առևտրի ծավալների աճի, ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտի, ինչպես նաև տրանսպորտի ծառայությունների աճի արդյունքում: Գյուղատնտեսության ճյուղում թողարկման ծավալները գրեթե չեն փոփոխվել, իսկ անասնապահության ենթաճյուղում ձվի արտադրության ծավալների անկումը փոխհատուցվել է սպանդի համար իրացված անասնի և թռչնի արտադրության ծավալների աճով:

Ինչ վերաբերում է արտաքին ապրանքաշրջանառությունը բնութագրող ցուցանիշներին, ապրանքների արտահանման (ՖՕԲ) ծավալների աճը 2011 թ. հունվար-փետրվար ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, կազմել է 27.6%, ներմուծման (ՍԻՖ) աճի տեմպը՝ 3.1%:

Ներկայացվեցին նաև ֆինանսական շուկայի առաջին եռամսյակի զարգացումները. եռամսյակի ընթացքում դրամավարկային պայմանների աստիճանական խստացման պայմաններում միջբանկային և ներբանկային ռեպո շուկաներում միջին տոկոսադրույքը նախորդ եռամսյակի նկատմամբ ավելացել է 0.54 տոկոսային կետով և կազմել 7.6%: Չնայած դրան, առկա իրացվելիության պայմաններում ՊՊ առաջնային շուկայում նախորդ եռամսյակի նկատմամբ արձանագրվել են տոկոսադրույքների նվազման միտումներ. մինչև 1 տարի ժամկետայնությամբ պարտատոմսերի միջին տոկոսադրույքը նվազել է 1.21 տոկոսային կետով և կազմել 7.9%, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի միջին տոկոսադրույքը նվազել է 0.68 տոկոսային կետով և կազմել 13.7%:

2011 թ. առաջին եռամսյակում արտարժույթի շուկայում դրամի միջին շուկայական փոխարժեքը նախորդ եռամսյակի նկատմամբ դրսևորել է հետևյալ միտումները. ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 1.48%-ով՝ կազմելով 366.14 դրամ, Եվրոյի նկատմամբ արժեզրկվել է 2.1%-ով՝ կազմելով 500.96 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է 6.25%-ով՝ կազմելով 12.53 դրամ:

Չնայած վերաֆինանսավորման տոկոսադրույքի աստիճանական բարձրացմանը, շարունակվում է պահպանվել վարկավորման ծավալների աճը, որը վերջին 12 ամիսների ընթացքում կազմել է 29%: Ընդ որում, վարկավորման ընդհանուր ծավալում գերակշռել է արտարժույթային միջոցներով վարկավորումը: Միայն 2011 թ. առաջին եռամսյակում տրամադրված 55 մլրդ վարկերի շուրջ 44 մլրդ դրամը

տրամադրվել է արտարժույթով: Վարկավորման աճի նման տեմպերը ԿԲ խորհուրդը մտահոգիչ համարեց համախառն պահանջարկի աճի միջոցով ապագայում գնաճային ռիսկեր առաջացնելու առումով:

Արտարժույթով վարկավորման մեծ ծավալների պայմաններում եռամսյակի ընթացքում արտարժույթային ավանդներն առաջանցիկ՝ 7.3% (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը՝ 6%-ով) աճ են արձանագրել դրամայինի նկատմամբ՝ 0.7%, հանգեցնելով դրամային զանգվածի 4.7%-ով նվազման, փողի զանգվածի 0.5%-ով աճի: Ազդեցատների 12-ամսյա զարգացումները, արտացոլելով ապադոլարայնացման միջոցառումների արդյունքները, ցույց են տալիս, որ դրամային զանգվածն առաջանցիկ՝ 22.8% աճ է ունեցել փողի զանգվածի համեմատությամբ՝ 11.9%, նմանապես՝ դրամային և արտարժույթային ավանդների 12-ամսյա աճերը կազմել են համապատասխանաբար՝ 40.4% և 1.2% (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը 8.5%-ով): Արդյունքում, 12-ամսյա կտրվածքով, դոլարայնացման մակարդակը նվազել է 9.6%-ով:

Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդը սկսեց քննարկումներն արտաքին և ներքին զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

2011 թ. առաջին եռամսյակում միջազգային ապրանքային շուկաներում արձանագրվեցին գների էական տատանումներ՝ պայմանավորված հիմնական նավթ արտահանող երկրներում աշխարհաքաղաքական զարգացումների և Ճապոնիայի տարերային աղետի պատճառով ձևավորված անորոշություններով: Այս իրավիճակում եռամսյակի առաջին կեսին գրեթե բոլոր հումքային և պարենային ապրանքների գները սահմանեցին վերջին երկու տարիների համար նոր բարձրակետեր, որին հետևեցին եռամսյակի վերջում նվազման ուղղությամբ ճշգրտումներ: Խորհուրդն արձանագրեց, որ չնայած ներկայումս պարենային ապրանքների միջազգային շուկաներում դիտվում է գների աճի տեմպերի անկում, սակայն 2011 թ. առաջին եռամսյակում կանխատեսումների համեմատ դրանց առաջանցիկ աճի արձանագրումն առաջիկա ժամանակահատվածի համար ներքին տնտեսությունում կպահպանի արտաքին գնաճային ճնշումները, գնաճի երկրորդային ազդեցությունները, գնաճային սպասումները:

Տնտեսության ներքին հատվածից եկող ազդակները առավելապես ոչ գնաճային են: Աշխատանքի շուկայից առկա են թույլ գնաճային ճնշումներ, մասնավոր ծախսումների ազդեցությունն առավելապես չեզոք է, սակայն առկա են ռիսկեր՝ կապված վարկավորման և տրանսֆերտների արագ աճի հետ: Գյուղատնտեսության ոլորտում ձեռնարկված միջոցառումները կնպաստեն 2010 թ. արդյունքներով այդ ճյուղում կրճատված առաջարկի վերականգմանը (կանխատեսվող բարենպաստ բնակլիմայական պայմաններում) արդեն իսկ առաջիկա ամիսներին: Վերջինները, ինչպես նաև 2011 թ. տարեսկզբից դրամավարկային պայմանների խստացումը, հարկաբյուջետային քաղաքականության զսպող ազդեցությունը համախառն պահանջարկի ձևավորման վրա, պետական այլ կառույցների աջակցությունը հակազնաճային միջոցառումների իրականացման գործընթացում իրական նախադրյալներ կստեղծեն գնաճը 2011 թ. երկրորդ կեսից նպատակային միջակայք վերադարձնելու համար:

Հաշվի առնելով վերը նկարագրված միջավայրը, որտեղ առաջիկա ժամանակահատվածի համար ռիսկեր են առաջացնում ամիսներ շարունակ արձանագրված բարձր գնաճի երկրորդային ազդեցությունները և գնաճային սպասումները, վերջիններիս չեզոքացման նպատակով ԿԲ խորհուրդը որոշեց շարունակել դրամավարկային պայմանների խստացումն ավելի փոքր քայլով: Նախորդ երկու ամիսներին վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5-ական տոկոսային կետով բարձրացնելուց հետո ապրիլին Խորհուրդը որոշեց բարձրացնել այն 0.25 տոկոսային կետով, միաժամանակ առավել ակտիվորեն կիրառել իրացվելիության կարգավորման գործիքներ:

2011 թ. ապրիլի 12-ի նիստում Խորհուրդը սահմանեց ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքի 8.5% մակարդակ, լոմբարդային ռեպոյի և ներգրավված միջոցների տոկոսադրույքների համապատասխանաբար՝ 11.5% և 5.5% մակարդակ:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

հեռ/ֆաքս. 56 37 61

էլ-փոստ. mcba@cba.am

www.cba.am